

ՄԱՏԵՆԱԻՇԱԿԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ»Ի ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եղնիկե կողրացու հանրայայտ երկը թարգմանուել է չորս լեզուներով։ Փրանսերէն՝ թարգմ. Ֆլորիֆալ (Փարիզ, 1853), Մարիկս և Մերսիէ (Փարիզ, 1959), գերմաներէն՝ թարգմ. Շմիդ և Գալիմքարեան, (Գիեննա, 1900), վերեր (Միւնիսէն, 1927), արևելահայերէն՝ թարգմ. Գ. Թայատուրեան (Բուշնաս Այրէս, 1951), ռուսերէն՝ թարգմ. Վ. Զալոյեան (Երևան, 1968)։ Մզանելի էր, որ Երեւանում էլ այն թարգմանուէր հայերէն։ Ակնկալուած թարգմանութիւնը¹ կատարել է բանասիրակոն զիսութիւնների դոկտոր՝ Իզուարան Ա. Ա. Արքահամեններ, որ մայրաքաղաքում վայելում է զրարարի մանագէտի հոչակ և զրարարի բուհական մի ձեռնարկի հեղինակ է։ Թարգմանութիւնը բնադրի հետ համեմատել և խմբադրել է նոյն բնադրատի զիսուական աշխատող, բանասիրական զիսութիւնների դոկտոր՝ լեզուարան Վարագ Առաքելանը։ Առաջի այդ երկու մասնագէտների համագործակցութիւնը երաշխիք էր, որ այս նոր թարգմանութիւնը լինէր անթերի և բնադրին միանդամայն հարազատ ու զերազանցէր բոլոր նախորդները։ Սակայն այժմ, երբ ծայրէ-ծայր համեմատել ենք բնադրի հետ, կարող ենք ասել, որ այն չառ յիտ թողնելով ռուսերէն սխալաշատ թարգմանութիւնը՝ հասել է հայերէն առաջին թարգմանութեան մակարդակին։ բայց չառ տեղերում զիջում է Մարիկսի և Մերսիէ Փրանսերէն թարգմանութեան, որ հարազատութեան տեսակտից մնում է չզերազանցուած։ Բայ Ա. Արքահամեննի, որին համակարծիք չենք, Գ. Թաշտառեանի թարգմանութիւնը «Ծնդհանուր առմամբ գոհացուցիչ է» (ներած. էջ 29)։

Եռուայր Բիւզանդացին այսպէս է բնութագրել Եղնիկի երկի լեզուն։ «Առ Եղնիկայ՝ միշտ կանոնաւոր է քերականութիւնն։ (ոչ առկա անքերական առացուածք ի մատենկան չքնազ հայկարանին՝ վերադրելի են անհմատ ձեռագրողաց)։ Խրատանշիւր մասն բանի որոշ պաշտօն մի կը կատարէ և անսույթաք իւր նախատակն կը դիմէ։ իւր ամէն բարդութիւննին յայտնի նշանակութիւն ունին։ կարճ բանմ, ի վերջակիտէ ի վերջակիտ՝ բայ, գոյական, վերադիր, ձեւ, զարձուած, ամենայն ինչ վճիռ է իրրե զգանակն։ Այսորիկ ազագաւ անաշխատ կը հասկնանք զիւր զիւրն, եւ զիւրաւ կարող ենք թարգմանել յամենայն յարեւմտեան բարբառ» («Կորին վարդապետ և նորին քարգմանութիւնն», Տփղիս, 1900, էջ 11)։ Մեծ հայագէտը հաւանարար այն աւելի «զիւրաւ» թարգմանելի էր համարում աշխարհաբար։ Սակայն քննութիւննը ցոյց է տալիս, որ բազմաթիւ տարբերութիւններ կան երկի տարբեր թարգմանութիւնների միջև։ արեւմտեանների հետ աշխարհաբար երկու թարգմանութիւններն եւ ունեն անվիճակի անձառութիւններց։ Սառեւ ներկայացնում ենք մեր զիւրագութիւններից մի քանիսը հայերէն վերջին թարգմանութեան մասին, առանց նկատի առնելու «Խրատաները», որոնք Եղնիկի հեղինակութիւնը չեն, առանց անդրազառնալու թարգմանութեան ներածութեան և ծանօթագրութիւններին, որոնցում արտարյատուած սխալ մտքերը պահանջում են առանձին լու-

1 Եղնիկե կողրացի, Եջու Աղանդոց. Աղանդների հերթում։ Թարգմանութիւնը, ներածութիւնը և ծանօթագրութիւնները Ա. Արքահամեննի։ Երևան, 1970։

սարանումներ : Կանգ չենք առնի նաեւ բնազրի հրատարակութեան ընտրութեան վրայ . երկի քննական հրատարակութիւնը թողած՝ Ա. Արրահամեանը թարգմանութիւնը կատարել է 1826ի տպագրութիւնից , որի մասին ինքն իսկ դրել է . «Պարզուել է , որ վենակելեան հրատարակութեան համար ձեռազիր չի օգտագործուել » (Ներած . էջ 27) : Մի կողմ թողնենք նաեւ այն , թէ թարգմանիքը որքանո՞վ է կարողացել օգտուել Եղնիկի ձեռազրից , որ պահւում է Մաշտոցեան մատենադարանում , բանաէք բների սրբազրութիւններից :

Բ = Բաղրատունու հրատարակութիւն , Մ = Մարիէսի և Մերսիէի հրատ . : Բնազրից անմիջապէս յետոյ՝ Ա. Արրահամեանի թարգմանութիւնը : Բնազրում չենք ընդդում ճիշտ թարգմանուած բառերը , թարգմանութեան մէջ ընդհակառակը :

1. Որ բաւականն է որպէս ի տալն զկենդանութիւնն , նոյնպէս և ի դիտութիւն իւրոյ անարար էութեանն և յիւրոց արարածոցն ի [Հասումն] ըստ իւրաքանչիւր բնութեանց ածել (Մ 9. 21—23 , Բ 7) — «Նա ունակ է ինչպէս կենդանութիւնը տալու , նոյնպէս եւ իր անստեղծ կուրեան գիտութեամբ իր արարածներից իւրաքանչիւրին ըստ իր կուրեան կատարելուրեան բերելու» (էջ 32) :

Բոլորումին սխալ է թարգմանուած ընդդուուած մասը :

ա . ի գիտութիւն հայցականը կարծուել է զործիականի իմաստ ունեցող (ինչպէս ի ձայն մեծ ասել) և թարգմանուել է «զիտութեամբ» : Մինչդեռ այն եւս , ինչպէս ի հասումն նախդրաւոր հայցականը , ածել բայի ուղեւորման հայցական տեղի պարագան է և թարգմանուելու է «զիտութեամբ» , ինչպէս «Հասկացութեամբ» : բ . եւ ոչ թէ «կատարելութեան» . թարգմանիչն ընդունել է ձեռազրում և տպագիրներում կարգացուող ի հասումն ընթերցուածի մարիստեան ի հասումն սրբազրութիւնը (տե՛ս ծան . 10) . բայց Մարիէսը հասումն բառը թարգմանել է «Հասկացութիւն , բժրոնում» , Փրանս . «compréhension» , իսկ Արրահամեանը՝ «կատարելութիւն» : Ճիշտ է Մարիէսի թարգմանութիւնը : գ . Պատճառն առելուց առաջ նշենք , որ բնազրի իւրաքանչիւր զենանունը սեռական հոլովի իմաստ ունի՝ «իւրաքանչիւրի» , եւ ոչ թէ հայցական՝ «իւրաքանչիւրին» . դասական դրաբարում այս գերանունը անփոփոխ է , բայց հայցական լինելու գէպքում ստանում է զ-նախդիրը , որ նա այստեղ չունի , ուստի հայցական չէ : դ . Թարգմանութեան ընդդուուած մասն այսպիսով ունի երեք սխալ . իսկ ամբողջութեամբ՝ սխալ և անմիտ է քրիստոնէական վարգապետութեան անսակէտից , որ Եղնիկինն է : Սա գրել է . «Որ (Ասուուած) զամենայն , զոր արար , զեղեցիկս արար , զրանաւորս եւ զանքանաւորս , զմտաւորս եւ զանմտաւորս , զիտաւունս եւ զանիստաւունս , զասունս և զանասունս» (Մ 10.13—14) : Այսինքն՝ ինչ որ Ասուուած ստեղծել է , կատարեալ է սկզբից ևեր : Թարգմանութեան ընդդուուած մասը ոչ միայն սխալ , այլև անիմաստ է : Մարիէսից առաջ Գ . Խաչատուրեանը ճիշտ է թարգմանել ամբողջ նախազասութիւնը . «Զենանաս է նա , ինչպէս կենդանութիւն տալու , նոյնպէս իր անստեղծ էութեան ծանօթութեան եւ իր ստեղծած իւրաքանչիւր արարածի բնութեան հասկացողութեան ստանորդելու» (էջ 3) , այսինքն՝ մարդուն առաջնորդելու :

2. Հիւղն , զոր ասեն անարգասաւոր եւ անիերպարան յայլյա կարեր արդիւն ծննդացնել . եթե ոչ՝ ի զիւպացն լինիցին չարիքն , եւ ոչ ի նմանէ (Մ 17.26—28) — «Հիւղն , որ անարգասաւոր ու անկերպարան են համարում , անարգասաւոր ու անկերպարան լինելով ինչպէս կարող էր տարբեր արդիւնքներ առաջ բերել , եթէ չարիքները պատահմունքներից չեն , այլ նրանից են» (էջ 42) :

ա . Զարգմանաւալիօրէն սխալուել են Խաչատուրեանը (էջ 13) եւ Արրահամեանը՝ բնազրի յայլյա ներգոյականը՝ «ուրիշների մէջ» , թարգմանելով իրեւ արդիւն հայցականի որոշիչ՝ «տարբեր» . ինչպէս չեն նկատել , որ այլու

հայցականի նախողիրն է ի (յ-). Եւ ոչ թէ զ- ինչպէ՞ս չեն յիշել, որ դասական զբարարում բայ-ստորոգեալը չե կարող որոշիչը բաժանել որոշեալից :

թ. Ախալ է նաև թարգմանութեան ընդդուռած վերջին մասը, քանի որ բնադրի երկու ժխտականներից երկրորդը՝ եւ ոչ, անտեղի անտեսուել է եւ առանց հմերի թարգմանուել է «այլ»: Այսառուրեանը հաւատարիմ է մնացել բնադրին: «...եթէ շարիքը դիմուածական չէ եւ ոչ ալ իրմէ է» (էջ 13): Աւելայն այս բառերը չեն կապւում Եղնիկի միտքն արտայայտող ճարտասանական հարցման: Հետ՝ «...զի՞արդ անարդասաւորն եւ անկերպարան յայլս կարէր արդինս ծնուցանել» — «անարդասաւորն ու անկերպարանը ինչպէ՞ս կարող էր արդինքներ տուաջացնել ուրիշների մէջ», այսինքն՝ անարդասաւորն ու անկերպարանը չէր կարող արդինքներ տուաջացնել ուրիշների մէջ: Եթէ այդպէս չէ, ուրեմն: «Եթէ ոչ» (այսինքն՝ եթէ ոչ կարէր ծնուցանել — «Եթէ այլպէս չէ»), ի դիպացն լինիցին շարիքն, և ոչ ի նմանէ» — «զիպքերից են լինում շարիքները, և ոչ թէ նրանից»: Մի քանի տող յետոյ հեղինակը դրել է: «...նոյնպէս եւ շարիքն ի դիպացն առնուն զանուանումն» (Մ 18:1-2): Շիշտ է մեկնարաննել Մարիկսը վենեսետիկան հրատարակութեան մէջ ծնուցանել բառից յետոյ դրուած ստորակէտը փոխարինելով միջակէտով եւ «քութ» նշանը զնելով ոչ-ի վրայ:

3. Ապա ուրեմն էր երրեք՝ զի բնաւ չէր ամենեւին ինչ արարիչ բաւանդակ, մինչ չել Աստուծոյ զմարդն արարեալ էր, ուստի չարիքն լինին (Մ. 20: 27-29), Բ 35) — «Հետեւարար կար ժամանակ, երբ գեռ աստուած չէր ստեղծել մարդուն, ամենեւին էլ չկար բովանդակ (չարութեան) ինչ-որ արարիչ, որից չարիքներ տուաջանային» (45):

57րդ ծան. մէջ թարգմանիչը պատճառարանել է այսպէս: «Բնադրի արարիչ բառը Գալէքքեարեանն սողզել է՝ շար»: Այդ բառը պէտք է մնայ, յաւելում պէտք է արուի առանց դրա փոխարինման: Բացի զրանից, բառերի բրնձարային զասաւորութեամբ միտքը պարզ չէ: Նախազասութիւնը հասկացւում է յաւելումով եւ բառերի վերադասաւորութեամբ: Թարգմանել ենք այդպիսի փոփոխութեամբ: Վերջակէտ: Բանասիրութիւնը զալտնի կամայականութիւնների զաշտ չէ:

Առանց «յաւելումի և բառերի վերադասաւորութեանց, բնադրի իմաստը հետեւանին է, ինչպէս Մարիկսն է թարգմանել զեսեւս: «Ապա ուրեմն կար ժամանակ, երբ բնաւ, ամենեւին չկար (չարիքների) բովանդակ (կամ ընդհանուր) արարիչ, քանի գեռ Աստուած չէր ստեղծել մարդուն, որից լինում են չարիքները»:

Եղնիկի բնդդիմակացների կարծիքի համաձայն, մարդն ստեղծելուց առաջ Աստուած ստեղծել է միայն հիւէն, որ չարիքների մի մասի պատճառն է կամ արարիչը: արդ, քանի որ հիւէն չարիքների միայն մի մասի պատճառն էր, ուստի չկար չարիքների բովանդակ կամ ընդհանուր արարիչ: Երբ Աստուած ստեղծեց մարդուն, դրանով իսկ ստեղծեց չարիքների մի երկրորդ արարիչ: Արդ, քանի որ չարիքները զործուում են, ըստ ընդդիմակացների, հիւէի եւ մարդու կողմէից («Քանդի մասանց չարեաց զանի մարդն արարիչ», զրել է Եղնիկը անմիջապէս յաջորդ տողում), որոնց Աստուած է ստեղծել, ուստի դուրս է զայխ, ըստ ընդդիմակացների, թէ «բաւանդակ իսկ չարեացն արարիչ Աստուած է» (նոյն տեղում), որ Եղնիկն շտապում է մերժել՝ «զոր ամենեւին մի՛ երեկ լիցի տեղել, թէ Աստուած չարեաց զատճառ իցէ, այլ այն, որ իւրուի կամաւաք զործ չարեացն զործիցէ» (Մ 20:30-31, Բ 35): Ընդդուռած դերանուան տակ պիտի հասկանանք մարդը, որ չարիքների բովանդակ արարիչն է իր աղաս կամքով:

4. Դա բե եւ ի չարէ ինչ եղն չարք արարեալ . . . (Մ 32:32, Բ 65) —

«Այլեւ՝ եթէ չարերը ինչոք չարից ստեղծուած լինէին...» (60) :

Նախագասութեան ենթական զազանքն յոդնակին է, որ Հեղինակը չի կրկնել, որովհենաւ որանից առաջ մի քանի անգամ յիշեցրել է: Զարք յոդնակին, որ թարգմանութեան մէջ ենթակայ է զարձել, խկական ենթակայի (զազանքն) ստորոգելիտական վերադիրն է: Բնազրի իմաստն է: «Այլեւ՝ եթէ (զազանները) ինչոք չարի կողմից չար ստեղծուած լինէին...»: Բնաւ չենք կարող ընդունել թարգմանութեան «չարերը» ենթական, որովհետեւ դրանով ենդիկին վերադրած կը լինէինք այն սխալ միտքը, թէ կան բարի եւ չար զազաններ. մինչդեռ ըստ նրա «Զիք ինչ չար բնութեամբ» (Մ 32:27): Եսյն սխալը զործել է նաև. Գ. Խաչատուրեանը (Էջ 31:5 ներքեւից) :

5. Ամն զգայլոյ կորինս] սնուցանել, եւ իրեն զշան կորինս՝ առ ընտելութեան ընդ անձն անկանին (Մ 34:12-13, Բ 68-69) — «Մէկը խնամում է զայլի ձագերը, որոնք, չան ձագերի նման ընտելանալով, նրա ետելից են զբնում» (61) :

Գրաբարի բառարաններում չտանք, թէ անկանիմ+ընդ+հայցական բառակապակցութիւնը նշանակի «մէկի ետեւից զնալ», ինչպէս այսուղ թարգմանուած է: Համարաբառի տուեաներով (Ա. Մակ., Թ, 17. Բ Մակ., Ժ, 15. Եսայի, Գ, 5. Եղեկ., ԼԹ, 5) անկանիմ բայց այդպիսի խնդրասութեամբ չի կորցնում իր «մի բանի կամ մէկի վրայ ընկնել» իմաստը, որ հոմանիշ աւելի յարմար մի բայով կարելի է արտայայտել, բայց ոչ երբէք «ետեւից զնալ»: Տուեալ նախագասութեան թարգմանութեանը յարմար են «փարուել, փաթաթուել» բայերը: Ուստի ամբողջ նախագասութիւնը նշանակում է: «Մէկն (ահա) զայլի՛ ձագեր է սնուցում (եւ ոչ թէ «ձագերը», ինչպէս թարգմանուած է), և ընտելութեան պատճառով, չան ձագերի նման նրանք փարուում են (փաթաթուում են) սնուցողին («ընդ անձն»): Ճիշտ չէ ասել «շան ձագերի նման ընտելանալով», քանի որ բնագրում կայ առ ընտելութեան: Եսյն սխալը զործել է Գ. Խաչատուրեանը՝ «անոր հետ կ'զրոնի» (Էջ 33) :

6. Թեպէտ առ ժամանակ մի ... ընդ մահուամբ անկանիցի (ժարդն), այլ, ըստ իւրում կարողութեան, յարուցէ (Աստուած) միւսանգամ (Մ 37:2-4, Բ 75) — «Թէպէտ... (ժարդը) միւսաժամակ ժահուան տակ է ընկնում, բայց (արարիչը) իր կարողութեամբ կրկին կ'առողջացնի (նրան)» (64) :

Ըստ Հայկական ակադեմիայի հրատարակած «Ժամանակակից Հայոց յեղուի բացատրական բառարան»ի (Համոր առաջին, Երեւան, 1969) առողջացնին բառը նշանակում է «քրուժել»: Արդ, Աստուած մեռեալներին ոչ թէ բուժելու, այլ յարութիւն է տալու՝ ըստ քրիստոնէական փարգապետութեան: Թարգմանիչը թերեւս «յարութիւն տալ» «կրօնա-առաօպելական» արտայայտութիւնից խուսափելու համար նախրնուրել է «առողջացնել» բայր, որ իր կամ խմբադրի մայրենի բարբառում կարող է նշանակել զրարար յարուցնելի բայի կրօնական իմաստը կամ էլ «ողջացնել», «կենդանութիւն տալ»: Գ. Խաչատուրեան՝ «զիտի յարուցանէ» (36) :

7. Հանել չկարեն (կախարդք զի եւն), բայց ամդէն կապել մարտեն, զի հանապան խեղդ ընդ անձն [ինգույլ] մարդոյն դեւն լինիցի (Մ 41:18-19, Բ 86) — «Հանել չեն կարողանում, բայց կարող են տեղում կապել, քանի որ դեւր միշտ կապանք է լինում ժարդու հոգուն» (70) :

Ըստ Մարիէսի տեղեկութեան (ծան. 292), Շմիդը բնագրի զի բայր թարգմանել է «օրաբէողի», Վերերը՝ «որ» (չաղկամ): Մարիէսը՝ «այնպէս որ», Խաչատուրեանը՝ «փասն զի» (42): Կարծում ենք, որ կարելի է ճիշտ Համարել «օրաբէողի», որ» կամ «այնպէս որ» թարգմանութիւնները. «...որաբէողի դեւր միշտ կապանք լինի ժարդու հոգուն»:

Նախարարելի էր չկարեն բայը թարգմանել «չեն կարող», որ կատա-

բելի կերպի կամ հնարաւորութեան գաղափար է տալիս, ինչպէս թարգմանուել է Հոմանիշ շմարքեն բայց :

Այդ տողերում (ինչպէս աւելի յստակ՝ երկի համապատասխան է ջեռում) ասում է, թէ, ըստ ընդգիւմակացների, կախարդները կարող են մարդու հոգուն կապել սատանան : Իսկ հետեւեալ տողերի բարգմանութեան մէջ նրանք դարձել են միայն միջնորդներ .

8. Քանի անդէն կապել կախարդացն զիեւն՝ որպէս ասեն, և խեղդ ընդ անձն միշտ [ուղարք] մարդոյն առնել, լաւ էր, թե յայտներ, և սրովք աղաչեցիալ զլատուած՝ ազնականութիւն գտանէր բուժելոյ ի չարէն (Մ 41:42, Բ 86:87) — «Փոխանակ, ինչպէս ասում են, կախարդների միջոցով տեղում կապելու զեւը, որը միշտ կապանէ ի լինում մարդու հոգուն, լու կը լինէր (այդ մասին) յայտնել սրբերին, և, նրանց միջոցով աստծուն խնդրելով, օգնութիւն դանել՝ շարից բուժուելու համար» (71) :

Այս նախադասութեան թարգմանութեան մէջ մի քանի անձշտութիւններ կան :

ա. Քանի անդէն կապել կախարդացն զիեւն ... և խեղդ ընդ անձն միշտ ուղարք մարդոյն առնել բառերը կազմում են Համազամա երկու նախադասութիւն, որուեց սատրոգեանները արտայարուած են անորոշ գերբայներով՝ կապել եւ առնել, ուստի եւ ենթական՝ կախարդաց, գրուած է տրական հոյովով : Այսպիսով կարելի է թարգմանել . «Փոխանակ կախարդները տեղում կապէնի զեւը, ինչպէս ասում են, եւ մարդու հոգուն միջու կապանք գարձնէին (այն) . . .» : Անհասկանալի է, թէ քերականութեան կանոններն առանց խախտելու ինչպէ՞ս կարելի է կախարդաց բառը թարգմանել «կախարդների միջոցով» : Թարգմանութիւնից յայտնի չէ, թէ ո՞վ է կապում զեւին . մի՞ւս զեւերը :

բ. Դարձեալ անհասկանալի է, թէ ինչպէ՞ս խեղդ առնել «կապանք դարձնել» ներդորձական սեռի հարադիր բայց կարելի է թարգմանել չեղոք սեռի եղակի երրորդ քէմքով՝ «կապանք է լինում» : Տե՛ս նաև նախորդ դիսողութիւնը, ուր պարզ ասուած է, թէ կախարդներն են կապում զեւին մարդու հոգում :

գ. Թարգմանութեան մնացած մասը, ուր անտեսուած է զրարարի քերականութիւնը, նոյնքան մութ է եւ միամիտ :

(«Լու էր, թէ») յայտնելից զիմաւոր բայց թարգմանուած է անորոշ իմաստով՝ «լու կը լինէր (այդ մասին) յայտնել» . ո՞վ յայտնելը . ընազրի յայտնելը բայց նշանակում է «յայտնուէր» , կրաւորակերպ չեղոք, քանի որ անցեալ անկատարում չեղոքն ու կրաւորականը միաձեւ են : Համաձայն ենք Մարիէսի Հետ, որ այդ բառերը նշանակում են «Աւելի լու էր, որ (սատանան) յայտնը էլլը» , թարբոն չմնար մարդու հոգում :

Թարգմանիչի համար յայտներ բայց ունի անուզգակի խնդիր՝ «սրբերին», որ ընազրում գործիական հոյովով է՝ սրովք : Նա իրեն իրաւունք է վերապահէլ այս գործիականը տրուհելու «օրբերին» եւ «նրանց միջոցով» բառերի : Որպէս խմբագրութիւն մի քէզ զօրաւոր է : Մինչդեռ սրովք գործիականը իրեն յաջորդող աղաչեցեալ բայց խնդիրն է : Ուստի լու էր, թէ յայտնելը, եւ սրովք պահանջեալ զլատուած բառերը նշանակում են . «Աւելի լու էր, որ (սատանան) յայտնուէր, և (մարգը, որի հոգուն կապանք է լինում սատանան) սրբերի միջոցով Աստուծոյ աղաչելով» աղաչելով՝ աղաչելուն գտանէր բուժելոյ ի չարէն «չարից բուժուելու օգնութիւն (կը) գտնէր» : Սրբերի, նահասակների կամ Աստուծածնի միջնորդութեամբ Աստուծոյ զիմելը շատ սովորական է եղեղեցու աղօթքներում, բայց «օրբերին յայտնելու»-ը միամիտ արտայայտութիւն է : Միաւնիքով է թարգմանել նաև Գ. Անշատութեանը (էջ 42) :

Երուսաղէմ
Շարունակելի